ՈՐԱԿՅԱԼ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ - ԱՐԺԱՆՊԱՏԻՎ ԱՇԽԱՏԱՆՔ

2017 թվականի նոյեմբերի 24-ին Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև ստորագրված «Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի» (այսուհետ նաև՝ Համաձայնագիր) 366-րդ հոդվածով նախատեսված էր ձևավորել Քաղաքացիական հասարակության պլատֆորմ՝ կազմված Եվրոպական միության քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներից, այդ թվում՝ Եվրոպական տնտեսական և սոցիալական հարցերով կոմիտեի անդամներից և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական հասարակության կազմակերպություններից, այդ թվում՝ Արևելյան գործընկերության Քաղաքացիական հասարակության ֆորումի Հայաստանի ազգային պլատֆորմի ներկայացուցիչներից [1]:

Ի կատարումն Համաձայնագրի՝ Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի թիվ 666-Լ որոշմամբ հաստատվել է Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության և Ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև կնքված Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի կիրարկման ճանապարհային քարտեզը [2]:

ԵՄ-ի կողմից ֆինանսավորված «Հայաստանում ՀԸԳՀ-ի կատարման մշտադիտարկում քաղհասարակության կողմից» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) շրջանակներում մշտադիտարկման են ենթարկվելու Ծրագրով ընտրված Համաձայնագրի 6 առաջնահերթ ոլորտներում կատարված գործողությունները և (կամ) դրանց իրականացման ընթացքը: Վերը նշվածներից 6-րդ է՝ Կրթություն, վերապատրաստում և երիտասարդությանն առնչվող հարցեր ***(Համաձայնագրում՝ Հոդվածներ 94-95)***:

Մշտադիտարկման ընթացքում, բացի վերոնշյալ 6 ոլորտներում կատարված բարեփոխումների և առանձին գործողությունների կատարողականի և դրանց ազդեցության գնահատումից, գնահատվելու է նաև՝ թե դրանք ինչքանով են իրականացվել քաղաքացիական հասարակության հետ համագործակցությամբ:

Ծրագրի թիրախային 6-րդ ոլորտի ներքո ընտրված ուղղությունն է՝ Տնտեսության և զբաղվածության զարգացման համատեքստում կրթություն աշխատաշուկա կապ:

Հետազոտության նպատակն է՝ «Հայաստանում ՀԸԳՀ-ի կատարման մշտադիտարկում քաղհասարակության կողմից» ծրագրի 6-րդ ոլորտի <<Կրթություն, վերապատրաստում և երիտասարդությանն առնչվող հարցեր ներքո>> ներքո ընտրված ուղղության Տնտեսության և զբաղվածության զարգացման համատեքստում կրթություն աշխատաշուկա կապի ուսումնասիրում:

Հետազոտության մեթոդաբանությունը՝

-ուսումնասիրել ՄԿՈՒ ոլորտի օրենսդրական դաշտը, առկա ռազմավարությունը և օրենքների առկայությունը, որոնք վկայում են ԵՄ-ի կողմից ֆինանսավորված «Հայաստանում ՀԸԳՀ-ի կատարման մշտադիտարկում քաղհասարակության կողմից» ծրագրով ընտրված Համաձայնագրի 6 առաջնահերթ ոլորտներից «Կրթություն, վերապատրաստում և երիտասարդությանն առնչվող հարցեր» ոլորտում կատարված գործողությունները և (կամ) դրանց իրականացման ընթացքը, կատարված բարեփոխումների և առանձին գործողությունների կատարողականը և դրանց ազդեցության գնահատումը, քաղաքացիական հասարակության հետ համագործակցությամբ դրանց իրականացման համատեքստում:

-գործատուների կողմից մասնագիտական գիտելիքների, կարողությունների և հմտությունների

որոշակիացման համար տնտեսության տարբեր ոլորտների 30 գործատուների, կրթության ոլորտում քաղաքականություն մշակող և իրականացնող պետական լիազոր մարմինների ներկայացուցիչների, ուսումնական հաստատությունների ներկայացուցիչների շրջանում իրականացված խորացված հարցազրույցներով և նախապես մշակված հարցաշարերով, որը ներառում է «Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի» 366-րդ հոդվածով նախատեսված էր ձևավորել Քաղաքացիական հասարակության պլատֆորմին առնչվող հարցերին, կրթություն – աշխատաշուկա խնդիրներն Հայաստանի Հանրապետության համար շարունակական քաղաքական գերակայություն է տնտեսության զարգացման տեսլականի և աշխատաշուկայի պահանջարկին համապատասխան ավելի մեծ թվով աշխատատեղերի և նպաստավոր գործարար միջավայրի ստեղծումը: Արժանապատիվ և կայուն զբաղվածությունը շարունակում է մնալ ազգային նպատակ, այնպես, ինչպես կրթական ծառայությունների մատուցման շուկայում ծրագրերի արդյունավետության բարձրացումը, ներառյալ մոնիտորինգի և գնահատման մեխանիզմը, աշխատաշուկա մուտք գործող երիտասարդների և կանանց համար ավելի լավ աշխատատեղեր ստեղծելը: Միայն հասանելի և զարգացած կրթական համակարգի շնորհիվ կարելի պատրաստել աշխատաշուկայում պահանջարկված բարձր որակավորում և աշժանապատիվ աշխատանք ունեցող կադրեր, որոնք ներուժ կլինեն հասարակության և պետության զարգացման համար:

Այս համատեքստում մասնագիտությունների հստակեցման, և թե՛ այդ մասնագիտություն-ների պատրաստման գործընթացն առավել արդյունավետ և նպատակաուղղված իրականացնելու և բնականաբար այդ մասնագետների քանակը պլանավորելու համար շատ կարևոր է աշխատաշուկայի պահանջարկի վերլուծությունը և զարգացման միտում-ների գնահատումը, քանի որ դա է լինելու այն հենքը որը պիտի դրվի տնտեսական, կրթական և սոցիալական պաշտպանության ոլորտներում պետության և մասնավոր հատվածի կողմից իրականացվող քաղաքականություններում:

Աշխատաշուկայի իրական կարիքների և կրթության ոլորտի կողմից թողարկվող և առաջարկվող աշխատուժի միջև կառուցվածքային անհամապատասխանության արդյուն-քում զգալի բացեր կան աշխատուժի առաջարկի և պահանջարկի միջև [3]: ԱՄԿ Հմտությունների զարգացման վերջին հետազոտությունը ցույց է տվել, որ հարցվածների 85%-ը կարծում է, որ հմտությունների պակասը բացասաբար է անդրադառնում իրենց ոլորտում գործող ընկերությունների վրա՝ ժամանակի, ֆինանսական ռեսուրսների, արտադրողականության, հաճախորդների և որակի կորստի առումով [4]:

Հայաստանի Հանրապետության հետագա բնականոն զարգացման ռազմավարության առաջնահերթությունը պայմանավորված է գիտելիքահենք տնտեսությամբ, որի կայուն զարգացման համար անհրաժեշտ է լուծել աշխատաշուկայի պահանջներին բավարարող բարձրորակ և մրցունակ մասնագետների պատրաստման հիմնախնդիրը: Հարկ է նշել որ ներկայումս դեռևս թույլ է մասնագիտական ուսումնական հաստատությունների (ՄՈՒՀ) և գործատուների կապը, ինչպես նաև դրա արդյունավետությունը: Հաճախ գործատուները չեն կարողանում հստակ ձևակերպել մասնագետներին անհրաժեշտ որակական բնութագրերը, հաճախ էլ դրանք անտեսվում են ՄՈՒՀ-ի կողմից: Արդյունքում, ՄՈՒՀ-ի շրջանավարտները՝ մասնագետները մասնագիտական անհրաժեշտ կարողությունների, հմտությունների և որակների բացակայության պատճառով պահանջված չեն աշխատաշուկայում կամ աշխատում են այլ մասնագիտությամբ և ցածր աշխատավարձով, որը հեռու է <<արժանապատիվ աշխատանք>> լինելուց:

Սա բնականաբար պահանջում է ՄՈՒՀ-ի ինստիտուցիոնալ և կրթական ծրագրերի բովանդակության՝ ըստ էության բարեփոխումներ, մասնագետներին ներկայացվող պահանջները կրթական ծրագրերում արտահայտելու և գործընթացի կազմակերպական կառուցվածքի վերանայում և փոփոխում:

Աշխատաշուկայի ուսումնասիրությունը, բնակչության զբաղվածության պարբերական դիտարկումը էապես կարևորվում է աշխատաշուկայում պահանջարկ և մեծ վարկանիշ ունեցող որակյալ մասնագետների պատրաստման հարցում: Այս հիմնախնդիրը դիտարկ-վում է գրեթե բոլոր երկրներում՝ հաշվի առնելով երկրի տնտեսության և կրթության համակարգի զարգացման միտումներն ու տեմպերը, կրթության բովանդակության շարունակական արդիականացման ու ուսուցման գործընթացում ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման անհրաժեշտությունը:

Արժանապատիվ և արդյունավետ աշխատանքի ապահովման համար ի թիվս այլ ծրագրերի <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2014-2025 ԹԹ. ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՒՄ>> սահմանված են 4 գերակայություններ

1) Գերակայություն 1. Զբաղվածության ընդլայնումը,

2) Գերակայություն 2. Մարդկային կապիտալի զարգացումը,

3) Գերակայություն 3. Սոցիալական պաշտպանության համակարգի բարելավումը,

4) Գերակայություն 4. Կառավարման համակարգի ինստիտուցիոնալ արդիականացումը:

Զբաղվածության ընդլայնումը որպես կարևորագույն գերակայությունն շեշտադրում է որակյալ, բարձր վարձատրվող աշխատատեղերի ստեղծմանն ուղղված գործողու-թյունները: Զբաղվածների թվի աճը և աշխատանքի շուկայից տարբեր պատճառներով դուրս մնացած մարդկանց մուտքը աշխատանքի շուկա՝նվազագույն աշխատավարձի համապատասխան քաղաքականության գործադրման հետ մեկտեղ, աղքատության մակարդակի կրճատման առանցքային մեխանիզմն են:

Մարդկային կապիտալի զարգացման գործողություններն ուղղված են լինելու առաջնային ծառայությունների ծավալների,որակի և մատչելիության աճին (ներառյալ՝ առողջապահությունը, կրթությունը, գիտությունը, մշակույթն ու առաջնային ենթակառուցվածքները)՝ հատուկ շեշտադրելով նաև մարդու և բնության փոխհարաբերություններն ու ներդաշնակ զարգացումը:

Ելնելով աշխատատեղեր ստեղծելու կարճաժամկետ և երկարաժամկետ ներուժից, ինչպես նաև որակյալ տնտեսական աճ ապահովելուն ուղղված համապատասխան ներդրումից՝ ծրագրի ուղղակի քաղաքականություններին ենթակա ոլորտային և բնագավառային գերակայություններն են.

1) Արդյունաբերությունը և արտահանման խրախուսումը.

2) Զբոսաշրջության զարգացումը.

3) Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացումը.

4) Գյուղատնտեսությունը և գյուղի զարգացումը.

5) Փոքր և միջին ձեռնարկությունների ստեղծման և գործունեության ապահովումը:

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության ոլորտի զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների 2020-2030 թվականների ռազմավարության յոթ սկզբունքնե-րից՝ Տեխնոլոգիական արդիականացում և նորարարություն բաժնում նշված է - Հայաստանի գյուղատնտեսության մրցունակությանունը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է ընդհլայնել ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման և արդյունավետ կիրառման բնագավառները:

Մարդկային կարողությունների և հմտությունների զարգացնում բաժնում նշված է՝ գյուղատնտե-

սության ոլորտի զարգացման նպատակով անհրաժեշտ է ներդրումներ մարդ-կային կարողություն-ների զարգացման և բացահայտման ուղղությամբ՝գյուղատնտեսու-թյան բոլոր հատվածներում և մակարդակներում:

2022 թվականին արձանագրվել է վերջին 15 տարիների համար աննախադեպ՝ 12,6 տոկոս տնտեսական աճ և 13 տոկոս գործազրկություն, ինչը վերջին տասնամյակի համար էակա-նորեն ցածր ցուցանիշ է: Ընդ որում՝ 2022 թվականի երրորդ եռամսյակում Հայաստանում գործազրկու-թյան մակարդակը կազմել է 11,6 տոկոս, որը վերջին 14 տարիների ընթացքում ամենացածր ցուցանիշն է:

Հայաստանի աշխատանքի շուկան բնութագրվում է մի շարք խնդիրներով, որոնք խորացել են ոչ վաղ տնտեսական ճգնաժամի և տարածաշրջանում Հայաստանի Համար ոչ բարենպաստ վերջին զարգացումների հետևանքով: 2000-ականների բարձր տնտեսական աճը չհանգեցրեց զբաղվածու-թյան զգալի ընդլայնման, քանի որ առավելապես պայմանավորված էր արտադրողականության աճով և տնտեսությունում տեղի ունեցող կառուցվածքային փոփոխություններով: Մասնավորա-պես՝ շեշտակի աճեց շինարարության ոլորտի կշիռը, սակայն այդ ոլորտում զբաղվածության աճը տեղի ունեցավ արդյունաբերությունում տարբեր ճյուղերում զբաղվածների թվի կրճատման պայմաններում:

Հաշվի առնելով Հայաստանում բնակչության ծերացումը, աշխատուժի մեջ նրանց համեմատաբար մեծ տեսակարար կշիռը, երիտասարդների միգրացիան, գլոբալ հմտություններում տեղի ունեցող արագ փոփոխությունները՝ նոր մարտահրավերներին և տեխնոլոգիական արագ փոփոխություն-ներին հարմարվելու համար կարևոր նշանակություն է ստանում աշխատանքային գործունեության ողջ ընթացքում աշխատողների կարողությունների և հմտությունների շարունակական զարգացումը: 2021թ. հունվարի 1-ի դրությամբ ՀՀ մշտական բնակչության կառուցվածքում 0-15 տարեկան երեխաների տեսակարար կշիռը կազմել է 21,4%, աշխատունակ տարիքինը՝ 63,5% (շուրջ 1.88 մլն մարդ), իսկ աշխատունակ տարիքից բարձր բնակչության տեսակարար կշիռը՝ 15,1%: 2018թ. հունվարի 1-ի դրությամբ աշխատունակ տարիքի բնակչության տեսակարար կշիռը կազմել է 65,1% (շուրջ 1.93 մլն մարդ): 2021թ. տարեսկզբի դրությամբ աշխատունակ տարիքի ամեն 1000 մարդուն բաժին է ընկել 0-15 տարեկան և կենսաթոշակային տարիքի 575 մարդ՝ 2020թ. նույն ժամանակահատվածում արձանագրված 566 մարդու, իսկ 2018թ. տարե-սկզբին՝ 537 մարդու համեմատ: Այսինքն՝ վերջին տարիներին դեմոգրաֆիական ծերացումը ավելի է խորացել: Բնակչության միջին տարիքը 2021թ. տարեսկզբի դրությամբ կազմել է 37,0 տարի, տղամարդկանց համար՝ 34,9, իսկ կանանց համար՝ 38,9 տարի: Բնակչության ծերացումը անմիջականորեն կապված է ոչ միայն ծնելիության մակարդակից, այլ նաև ավելի մեծ չափով՝ արտագաղթի տեմպերից [5]:







Զբաղվածներն ըստ կրթական մակարդակի և տարիքային խմբերի 2021թ.[5]



Զբաղվածների 28% բաժին է ընկնում Երևանին, 12%-ը Արմավիրին, 10%-ը Արարատին, մնացած 50%-ը բաժին է ընկնում 8 մարզերին: Զբաղվածության ամենացածր ցուցանիշն է Վայոց ձորում՝ ընդամենը 2%:

Հայաստանում աշխատանքային հմտությունների նկարագիրը չի զարգացել և կատարելագործվել այն նույն ուղղությամբ, ինչ ԵՄ նոր անդամ պետություններում եւ Արևմտյան Բալկաններում [6]: Աշխարհի արդյունաբերական տնտեսություններում գնալով ավելի մեծանում է ինտենսիվ ճանաչողական առաջադրանքներ պահանջող աշխատանքների թիվը, որոնք իրենց բնույթով սովորական չեն և այդ իսկ պատճառով պահանջում են ադապտացում, խնդիրների լուծման եւ նոր գիտելիքների յուրացման ունակություններ: Նրանք դուրս են մղում սովորական առաջադրանքների կատարում պահանջող աշխատանքներին, որոնց հեշտորեն փոխարինում են տեխնոլոգիական լուծումները:

Զբաղվածության մակարդակն ըստ կրթական մակարդակի և սեռի 2021թ.[5]



Միջին հմտություններ ունեցող շատ աշխատողներ, ովքեր չունեն ճկուն հմտություններ և կարողություններ, ոչ սովորական, ինտենսիվ աշխատանք կատարելու որակավորում, ստիպված են լինում անցնել ցածր հմտություններ պահանջող աշխատանքի: Հայաստանում 2000-ականների սկզբից մինչեւ 2010-ականների կեսերն ընկած ժամանակաշրջանում մեծացավ սովորական հմտություններ պահանջող աշխատատեղերի թիվը, իսկ ոչ սովորական ճանաչողական աշխատանք պահանջող աշխատատեղերի թիվն ընկավ [6]:

Աշխատաշուկայի ակտիվությունն ըստ թափուր հաստիքների 2021 և 2022 թվականների համար [7]



2022թ.-ի առաջին երեք եռամսյակներին ՀՀ աշխատաշուկան շարունակել է ակտիվորեն զարգանալ, և գրանցել է մոտ 40% աճ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ: Սակայն գլոբալ աշխատաշուկայում առկա ճգնաժամը, ՀՀ դրամի արժեզրկումը, տարածաշրջանում տիրող իրավիճակը բացասական ազդեցություն են ունեցել աշխատա-շուկայի վրա: Հատկանշական է ինչպես ՀՀ-ում այնպես էլ ԱՄՆ-ում և Եվրոպայում SS ոլորտում տեղի են ունեցել զգալի կրճատումները: Աշխատաշուկայի ակտիվության նվազումը հատկապես ցայտուն է օգոստոսից սկսած:

Ենթապահանջարկված մասնագիտությունները՝ 2021-2022 թթ.:

2021 թ. ամենապահանջված մասնագետները ծրագրավորման մասնագետներն են՝16,8%-ը: Հաջորդ երկու հորիզոնականները զբաղեցնում են Վաճառքի և սպասարկման ու բանկային գործի հաստիքները: Մասնագիտությունների պահանջարկվածությունը և փոփոխությունը 2021 և 2022 թթ. -ին ունեցել են գրեթե նույն դինամիկան: Հիմնականում աճ է գրանցվել 2022 թ. վաճառքի կազ-

մա
կերպում, բնակարանային և վարկային մասնագիտություններով, ծրագրավորում մասնագիտությունով գրանցվել է նվազում՝միջինը 10 % [7]: 2022 թ. առաջին անգամ գրանցվել է SS ոլորտի աշխատանքների թվի նվազում: Անկումը գրանցվել է SS ոլորտին պատկանող բոլոր մասնագիտությունների մասով: Սակայն ի տարբերություն SS ոլորտի, զգալի աճ է գրանցել Ֆինանսաբանկային ոլորտն իր «Ֆինանսներ և բանկ» մասնագիտության կատեգորիայով: Մասնավորապես նախորդ տարվա արդյունքներով բոլոր աշխատանքների 6.5%-ն էին կազմում նշված ոլորտի հաստիքները, իսկ 2022թ.-ին այս հաստիքը գրանցել է ռեկորդային 12.1%, որը համարյա կրկնապատիկ անգամ մեծ է: Այս հանգամանքը հիմնականում պայմանավորված է այս տարի ՌԴ և ԱՊՀ այլ երկրներից ֆիզիկական և իրավաբանական անձանց մեծ հոսքով: Նախորդ տարվա համեմատ պահանջարկի աճ է գրանցել նաև Վաճառքի և սպասարկման, Տուրիզմի և հյուրընկալության, ադմինիստրատիվ և մի քանի այլ ոլորտներում: Հարկ է նշել նաև Հաշվապահական ոլորտի մասնագետների սղությունը 2022 թ. ամբողջ տարվա ընթացքում, որի աճը զգալի է եղել 2021թ. համեմատությամբ [8]:

2020 թ. թափուր աշխատատեղերի 47 % բաժին է ընկել խոշոր ընկերություններին, 29%- միջին, և 24% փոքրերին: 2021 թ. թափուր աշխատատեղերի 45 % բաժին է ընկել խոշոր ընկերություններին, 30%- միջին, և 25% փոքրերին: 2020 թ. նոր ստեղծված աշխատատեղերի 48 % բաժին է ընկել խոշոր ընկերություններին, 39%- միջին, և 13% փոքրերին: 2021 թ. թափուր աշխատատեղերի 42 % բաժին է ընկել խոշոր ընկերություններին, 48%- միջին, և 10% փոքրերին: 2020 թ. կրճատված աշխատատեղերի 47 % բաժին է ընկել խոշոր ընկերություններին, 42%- միջին, և 11% փոքրերին: 2021 թ. կրճատված աշխատատեղերի 25 % բաժին է ընկել խոշոր ընկերություններին, 25% - միջին, և 50% փոքրերին [8]:

Թափուր, նոր ստեղծված և կրճատված աշխատատեղերն ըստ ք. Երևանի և ՀՀ մարզերի 2021 թ. [5]: Ընդ որում անհրաժեշտ է նշել, որ նոր ստեղծվող , կրչատված և թափուր աշխատատեղերի համապատասխանաբար 73%,71% և 73 %- ը բաժին է ընկնում մայրաքաղաքին: Այս տվյալները ակնհայտ ցույց են տալիս ք. Երևանի և ՀՀ մարզերի անհամաչափ զարգացումն ու աշխատատեղերի անհամաչափ բաշխումը:

Հայաստանը ստանձնել է նաև մի շարք միջազգային պարտավորություններ, որոնք վերաբերելի են նաև մասնագիտական կրթության ոլորտին: ՄԱԿ-ի 2030 Կայուն զարգացման օրակարգը և, մասնավորապես, կայուն զարգացման նպատակ 4-ը՝ նախատեսում են ապահովել ներառական ու որակյալ կրթություն բոլորի համար և խթանել ողջ կյանքի ընթացքում ուսման հնարավորություններ:

Հայաստանը ստորագրել է նաև «Հայաստանի համար ՄԱԿ-ի Կայուն զարգացման գործընկերության 2021-2025 թվականների շրջանակ» փաստաթուղթը [1], որն ուղղված է ապահովելու, որ մարդիկ կիրառեն իրենց տաղանդներն ու հմտությունները, օգտվեն տարիքին համապատասխան, ցկյանս ուսուցումից («Շարունակական կրթություն» (ողջ կյանքի ընթացքում ուսումնառություն), ներառական և որակյալ կրթությունից՝ բարեն-պաստ և անվտանգ միջավայրում:

Եվրոպական Միություն-Հայաստան Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը [1] նույնպես հատուկ անդրադարձ է կատարում ամբողջ կյանքի ընթացքում կրթությունը խթանելու հարցերին՝ առանցքում պահելով մասնագիտական և բարձրագույն կրթությունը: Շարունակական կրթության խթանումը դիտվում է աճի և աշխատատեղեր ստեղծելու բանալին է՝

քաղաքացիներին ընձեռելով հասարակության մեջ լիարժեք կերպով ներգրավվելու հնարավորություն [1]:

Հայաստանում կանանց միայն կեսն (48 %) է մասնակցում աշխատաշուկային, ինչը տղամարդկանց համեմատ 22% –ով ցածր է [5,8]: Գործատուների կողմից դեռևս առկա են խտրականության դրսևորումներ, որոնք լրացուցիչ գործոն են կանանց աշխատուժի շուկայում մասնակցության սահմանափակման գործում:

Հայաստանի աշխատանքի շուկան ունի ևս մի կարևոր առանձնահատկություն՝ աշխա-տանքային միգրանտների մեծ բանակ: Աշխատանքային միգրացիայի մեծ ծավալները (տնային տնտեսությունների շուրջ մեկ երրորդը ունեն աշխատանքային միգրանտներ) նույնպես իր բացասական հետքն է թողնում աշխատաշուկայում ակտիվության մակարդակի վրա: Ներկայումս աշխատանքային միգրանտի կարգավիճակում երկրի սահմաններից դուրս գտնվողները վիճակագրական տեսանկյունից համալրում են տնտեսապես պասիվ աշխատանքային ռեսուրսները: Հարկ է նշել որ միգրացիան տարբեր անմիջական ազդեցություն կարող է ունենալ աշխատանքային շուկայի վրա՝ կախված դրա բնույթից: Մասնավորապես՝ Հայաստանում տնտեսական ակտիվության աճով պայմանավորված միգրանտների վերադարձի պարագայում հնարավոր է գործազրկության և աշխատուժի մասնակցության ցուցանիշների փոփոխություն:

Աշխատանքային միգրացիայի համատեքստում անհրաժեշտ է նշել, որ ԵԱՏՄ երկրների քաղաքացիներն իրավունք ունեն աշխատել Միության բոլոր հինգ երկրներում՝ առանց ազգային աշխատաշուկաների պաշտպանության սահմանափակումները հաշվի առնելու, պետք չէ ստանալ թույլտվություն աշխատանքային գործունեություն իրականացնելու համար [9]: ԵԱՏՄ–ի միասնական աշխատաշուկան կառույցի անդամ երկրների քաղաքացիներին տալիս է նաև մի շարք առավելություններ, որոնց թվում են. ԵԱՏՄ երկրներում տրված կրթության մասին փաստաթղթերի ճանաչում, եկամտահարկի չափ՝ որպես այն երկրի քաղաքացի, որտեղ աշխատանքի է ընդունվում, աշխատողի ընտանիքի բնակության իրավունք այն երկրում, որտեղ աշխատողն աշխատում է, աշխատողի երեխաների կրթության իրավունք այն երկրում, որտեղ աշխատողն աշխատում է, անվճար շտապ բժշկական օգնություն աշխատողի և ընտանիքի անդամների համար, աշխատողի բժշկական օգնություն,պարտադիր ապահովագրություն ժամանակավոր անգործության դեպքում:

Հայաստանում չափից մեծ թվով մարդիկ դեռեւս աշխատում են ցածր արդյունավետ ոլորտ-ներում: Աշխատուժի արդյունավետության մակարդակն ամենաբարձրն է հանքարդյունա-բերությունում, շինարարությունում և ժամանակակից բիզնես ծառայություններում: Այն ամենացածրն է գյուղատնտեսությունում և որոշակի ծառայությունների ոլորտում, օր.՝ առեւտուր, փոխադրումներ եւ պահուստավորում, զբոսաշրջություն (հյուրանոցներ և ռեստորաններ): Հայաստանի բնակչության համարյա կեսը (48%) ներկայումս զբաղված է այս 4 ցածր արդյունավետ ոլորտներում, որտեղ աշխատուժի արդյունավետությունը կարող է մեծանալ միայն այն դեպքում, երբ աշխատողները տեղափոխվեն ավելի արդյունավետ ոլորտներ, ներառյալ արտադրությունը, տեղեկատվական եւ հաղորդակ-ցային տեխնոլոգիաների ոլորտը և ժամանակակից բիզնես ծառայությունները[4]: Գյուղատնտեսությունը դեռևս շարունակում է ծառայել որպես կենսապահովման նշանակալից աղբյուր Հայաստանում:

Գյուղատնտեսությունը, որը բոլոր ոլորտների համեմատ ունի ամենացածր արդյունավե-տությունը, Հայաստանի եկամտի մակարդակի եւ ավելացված արժեքում այս ոլորտի փոքր մասնաբաժնի

պայմաններում կլանում է չափից մեծ թվով աշխատողներ: Ընդհանուր զբաղվածությունում գյուղատնտեսության մասնաբաժինը ժամանակի ընթացքում մեծացել է՝ հիմնականում ապահովելով ծառայությունների հետ կապված աշխատատեղեր: Այնուամենայնիվ, զբաղված բնակչության 22 տոկոսը 2021թ. դեռեւս աշխատել է գյուղա-տնտեսության ոլորտում:

Տնտեսական գործունեության ոլորտում գենդերային անհավասարության ցուցանիշներով (տղամարդկանց և կանանց զբաղվածության մակարդակի հարաբերակցությունը, հավա-սար վարձատրությունը հավասար աշխատանքի դիմաց, տղամարդկանց և կանանց մաս-նաբաժինը մասնագետների և տեխնիկական աշխատակիցների կազմում): 2021-ին Հայաստանը վատթարացրել է իր դիրքերը՝ զբաղեցնելով 78-րդ հորիզոնականը[5]՝ 2019-ի 69-րդ հորիզոնականի և մինչճգնաժամային 2007-ի 24-րդ հորիզոնականի համեմատ [10]:

2021-ին Հայաստանը վատթարացրել է իր դիրքերը՝ զբաղեցնելով 78-րդ հորիզոնականը [10]՝ 2019-ի 69-րդ հորիզոնականի և մինչճգնաժամային 2007-ի 24-րդ հորիզոնականի համեմատ: Այս ցուցանիշի կառուցվածքում առավել մեծ է գենդերային խզվածքը[6] զբաղվածության(Labour force participation, 84-րդ հորիզոնականի) և վաստակած եկամտի (Estimated earned income, 97-րդ հորիզոնական) ոլորտներում: Հայաստանում աշխատաշու-

կայի հիմնախնդիրները պարզորոշ երևում են 2021 թ. մարդկային կապիտալի ցուցանիշը դիտարկելիս [11]: Համաշխարհային տնտեսական ֆորումի զեկույցի համաձայն [12]՝

Հայաստանն աշխարհի 130 երկրների շարքում զբաղեցրել է 49-րդ հորիզոնականը՝ զարգացնելով իր մարդկային կապիտալի 64%-ը :

Ցուցանիշը բնութագրվում է չորս չափումներով՝ ներուժի առկայություն/կրթություն, ներուժի իրացում, զարգացում և «նոու հաու»: Թեպետ կրթության ընդգրկվածության ցուցանիշներով Հայաստանը 3-րդ հորիզոնականում է, սակայն ներուժի իրացման ցուցանիշով, որը ներառում է զբաղվածության ոլորտում գենդերային բացը և գործազրկությունը, 114-րդ հորիզոնականում է, ինչը վկայում է կրթության համակարգի անկատարության և մարդկային կապիտալի ոչ արդյունավետ օգտագործման մասին:

Կառավարությունը հաստատել է Հայաստանի տնտեսական քաղաքականության 2023-30 թվականների հայեցակարգը:

Հայեցակարգով Կառավարությունը տնտեսական զարգացման 5 գերակայություն է սահմանել՝

* գիտելիքահեն ու ստեղծարար տնտեսության ձևավորում և զարգացում.
* տեխնոլոգիական առաջընթաց, արտադրողականության աճ, բարձր ավելացված

արժեք և արժեշղթաների մեծացում.

* ենթակառուցվածքների զարգացում.
* ներդրումային և գործարար միջավայրի բարելավում.
* կայուն զարգացում, կանաչ տնտեսություն և կլիմայի փոփոխություն:

Ըստ հայեցակարգի՝ Կառավարությունը որդեգրում է գիտելիքահեն տնտեսություն ձևավորելու տեսլականը՝ գիտելիքը հռչակելով տնտեսական զարգացման հիմնական շարժիչ ուժ:

Ըստ հայեցակարգի արդյունաբերության, գյուղատնտեսության, ծառայությունների ոլորտում, էներգետիկ ոլորտում որևէ գործողություն նախաձեռնումը, որը միտված է արտադրողականու-թյան բարձրացմանը, կներառվի է այդ գերակայությունների բովանդակության մեջ:

Այսօր ՏՏ ոլորտի ձեռնարկությունների հիմնական մասնը աշխատում է որպես ծառայություններ մատուցող, մինչդեռ Հայաստանը պետք է դառնա արդեն պատրաստի տեղեկատվական տեխնոլոգիա արտադրող և վաճառող երկիր:

Ժամանակակից տնտեսությունը բնութագրվում է նոր տեխնոլոգիաների, նորարարական մոտեցումների, մշակումների և ներդրումների ամբողջականությամբ գերակա խնդիր դարձնելով կրթության և գիտության զարգացումը, որի շնորհիվ միայն հնարավոր է հասնել կայուն ու ներառական զարգացման ու համընդհանուր բարեկեցության:

Հայաստանի բիզնես համանքի հիմնական հատվածը չունի ՄԿՈՒ-ի հետ արդյունավետ կապ, եթե չասենք ընդհանրապես կապը: Կրթական համակարգը դիտարկվել է որպես զուգահեռ զարգացող բիզնես կառուցվածք, որը լուծում է որոշակի այդ թվում նաև սոցիալական խնդիրներ: Այս համատեքստում անհրաժեշտ է մոտեցնել ՄԿՈՒ-ն և տնտե-սությունը, ինչպես նաև համագործակցության նոր ձևաչափեր մշակել, մոտիվացնելով բիզնես համայնքին ամբողջությամբ և ոչ թե առանձին հատվածներին: Այս համատեքսոտում կարևորվում է բիզնես-մասնագիտական կրթություն ոլորտում սոցիալական գործընկերության պատասխանատվության և դերակատարում-ների բարձրացումը, որը միտված կլինի անմիջականորեն աշխատաշուկային առկա պահանջար-կին և ապագա զարգացումներին բավարարելուն:

Հայաստանի կրթական համակարգերում ներկայումս շեշտը դրվում է հիմնականում տեսական գիտելիքների ձեռքբերման վրա, մինչդեռ գործնական հմտությունները զարգացած չեն: Առանց գործնական փորձառության կրթությունը չի կարող արդյունավետ լինել:

Մարդկանց գիտելիքների և հմտությունների ուղղությամբ ներդրումները երկրի զարգացման գրավականն են: Կրթության ոլորտում նախատեսվող աշխատանքները և բարեփոխումները միտված են լինելու քաղաքակիրթ, ստեղծագործ, նախաձեռնող, կարողունակ, մրցունակ և ապագան իր սեփական երկրում պատկերացնող քաղաքացու ձևավորմանը:

Կրթության բոլոր մակարդակների որակի, արդյունավետության և մատչելիության ապահովման համար առանցքային են ներառական կրթական միջավայրի ստեղծումը, կրթության բովանդակության և կրթական ծրագրերի շարունակական արդիականացումը, անհրաժեշտ ենթակառուցվածքների արդիականացումն ու վերազինումը, ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների լայն կիրառումը ուսուցման և հատկապես կառավարման համակարգերում, «կրթություն-գիտություն-նորարարություն-աշխատաշուկա» կապի ամրապնդումը:

Ժամանակակից աշխատաշուկայում տեխնոլոգիական նորարարական գործընթաց-ների զարգացումները և ներդրումները պահանջում են նաև կրթությունն ամբողջ կյանքի ընթացքում:

Հայաստանում մասնագիտական կրթության և ուսուցման համակարգը ներկայացված է երկու մակարդակով՝ նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական:

Նախնական մասնագիտական կրթություն կարելի է ստանալ ուսումնարաններում և քոլեջներում, որոնք ունեն նախնական մասնագիտական կրթական ծրագրեր (հիմնական կրթական ծրագրի ուսուցման տևողությունը 6 ամսից մինչև 3 տարի)՝, իսկ միջին մասնա-գիտական կրթությունը՝ քոլեջներում և այն բուհերում, որոնք ունեն միջին մասնագիտական կրթական ծրագրեր (հիմնական կրթական ծրագրի ուսուցման տևողությունը 2 տարուց մինչև 5 տարի է)՝ մասնավորա-պես Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանը, Ճարտարապետության և շինարարության Հայսատանի ազգային համալսարանը, Հայաստանի ազգային ագրարային համալսարանը:

Արհեստագործական կրթությունը կարող է իրականացվել նաև «վարպետաց ուսուցման» ձևով, անհատական ուսուցման ժամանակացույցով [13]։

ՄԿՈՒ ոլորտում պետական քաղաքականության ռազմավարական ուղղությունները սահ-մանվում են նաև մի շարք ենթաօրենսդրական ակտերով և հայեցակարգային փաստա-թղթերով։ Այսպես, ԿԳՄՍ նախարարի 2018թ. մարտի 15-ի հրամանով հաստատված «Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտում սոցիալական գործընկերու-թյան հայեցակարգը» [14] պարունակում է սոցիալական գործ-ընկերության զարգացմանը և շարունակական խթանմանը վերաբերող ռազմավարական խնդիրներն ու առաջարկում է բոլոր շահառու կողմերի շահերից բխող լուծումներ։

Առկա մարտահրավերները ՄԿՈՒ համակարգում էլ ավելի են կարևորում աշխատանքի վրա հիմնված կրթության ներդրման և կիրառման հնարավորությունների ընդլայնումը, ինչը բնականաբար թույլ կտա գործատուներին ներգրավված լինել կրթական գործընթացներում, ուսումնական հաստատությունների հետ համատեղ մասնակցել տեխնոլոգիական և կրթական նորարարական նախագծերին, ապահովել սովորողների տեսական և գործնական կարողություն-ների և հմտությունների ձևավորումը, արժանապատիվ աշխատանքի և զբաղվածության խթանումը [15]։

Հայաստանում աշխատանքի վրա հիմնված կրթության՝ դուալ կրթական համակարգի փորձարկումը սկսվել է 2017թ. «Մասնավոր հատվածի զարգացում և մասնագիտական կրթություն և ուսուցում Հարավային Կովկասում» (ՄՀԶ ՄԿՈՒ) ծրագրով, որն իրականացվում է Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության՝ GIZ-ի կողմից՝ ԳԴՀ տնտեսական համագործակցության և զարգացման նախարարության (BMZ) պատվիրակմամբ Ծրագրի նպատակն է բարելավել կայուն տնտեսական զարգացման պայմանները և աջակցել ներառական աճին, հատկապես գյուղական շրջաններում։

2019 թ. ընդունվել է «Հայաստանում աշխատանքի վրա հիմնված ուսումնառության զար-գացման հայեցակարգ և 2019-2025թթ. գործողությունների ցանկ», որը ռազմավարա-կան փաստաթուղթ է՝ ՄԿՈՒ ոլորտում քաղաքականության շրջանակի ձևավորմանը և Հայաստանում ԱՀՈՒ նոր ձևերի աստիճանական ներդրմանը։ Փաստաթուղթը սահմանում է մի շարք գործողություններ, որոնք անհրաժեշտ են ԱՀՈՒ-ի հաջող իրականացման և հետագա ընդլայնման համար, ներառյալ քաղաքականության և իրավական դաշտի բարելավումը, ԱՀՈՒ կազմակերպումը և իրականացումը աշխատավայրում և լսարանում ԱՀՈՒ-ի որակի ապահովումը, ԱՀՈՒ ֆինանսավորումը և ձեռնարկությունների համար խթանները։

«Հայաստանի Հանրապետության կրթության մինչեւ 2030 թվականը զարգացման պետա-կան ծրագիրը հաստատելու մասին» օրենքի նախագիծը [16], որը կրթության բնագավա-ռում պետական քաղաքականության կազմակերպական հիմքն է («Կրթության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 4-րդ կետ)։

Նշված փաստաթղթով ՄԿՈՒ հիմնական ռազմավարական առաջնայնություններ են սահմանված.

- աշխատանքի վրա հիմնված ուսուցման խթանումը,
- ՄՈՒՀ մանկավարժական աշխատողների վերապատրաստումը և շարունակական մասնագիտական զարգացումը,
- Կրթություն-մասնավոր հատված համագործակցությունը,
- ինստիտուցիոնալ կարողությունների բարձրացմանն աջակցությունը,

- ՄԿՈՒ ֆինանսավորման մեխանիզմների վերանայումը:

ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 27-ի N 442-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության 2014-2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավա-րական ծրագիրը» նույնպես առաջնահերթություն է տալիս ՄԿՈՒ համակարգերի զարգացմանը՝ երկրի երկարաժամկետ սոցիալտնտեսական զարգացման համար՝ նպաակ ունենալով «բարձրացնել զբաղվածությունը որակյալ և բարձր արտադրողականություն աշխատատեղերի ստեղծման միջոցով»:

Մասնագիտական կրթության որակի առումով ամենաակնառու խնդիրն է մնում մասնագիտական հմտությունների անհամապատասխանությունն աշխատաշուկայի պահանջարկին, ինչպես նաև կրթություն և աշխատաշուկա,սոցիալական գործընկերներ թույլ կապը: Հետազոտությունների համաձայն ՄԿՈՒ հաստատությունների շրջանավարտների միայն 41%-ն է համարում, որ ձեռք բերված տեսական գիտելիքները համապատասխանում են իրենց աշխատանքի պահանջներին, և միայն 43%-ն է կարծում, որ ձեռք բերված գործնական հմտությունները համապատասխանում են աշխատանքի պահանջներին [17]: Մյուս կողմից, Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականը զարգաց-ման պետական ծրագիրը թիրախ է սահմանում շրջանավարտների 90%-ի ըստ մասնագի-տության զբաղվածության ապահովումը [16]:

Մեկ այլ հետազոտության[18] տվյալներով՝ ուսանողների 86%-ը նշում է, որ ուսումն ավարտելուց հետո աշխատանքային գործունեություն իրականացնելու համար կարիք կունենա լրացուցիչ վերապատրաստման: Գործատուների շրջանում անցկացված հարցման արդյունքներով՝ 78%-ը երիտասարդ մասնագետի աշխատանքի ընդունելիս առնչվում է վերջինիս աշխատանքային փորձի և գործնական կարողությունների պակասի հետ:

Մյուս կողմից, դասախոսների մեծ մասը շարունակում են աշխատել ակադեմիական մոտեցմամբ և լիարժեք չեն պատկերացնում այն աշխատաշուկան և զբաղմունքները, որի համար կրթում են կադրերին: Արդյունքում՝ երիտասարդների 33%-ն իր աշխատանքի համար կա՛մ գերկրթված է, կա՛մ թերկրթված:

ՄԿՈՒ ոլորտի դասավանդողների աշխատավարձը մրցունակ չէ և չի գրավում բարձրակարգ մասնագետներին աշխատելու մասնագիտությամբ: Նրանք չեն օգտվում նաև սոցիալական փաթեթից, որից օգտվում են հանրակրթության ոլորտի ուսուցիչները:

Ուսումնական հաստատությունների քանակը և շուկայի նոր պահանջներով պայմանա-վորված մասնագիտությունների ցանկը փոփոխվում է, փոփոխվում է նաև մասնագիտու-թյուններին ներկայացվող պահանջները, այդ մակարդակում կրթություն ստացողների և ավարտողների թիվը, սակայն դա իրական պատկերացում չի տալիս աշխատաշուկայի պահանջարկի բավարարման համար:

Արդեն իսկ հրամայական է դարձել առկա մասնագիտությունների վերանայումը, նոր տեխնոլո-գիաներով պայմանավորված տնտեսության զարգացման համար պահանջվող և նորարար մասնագիտությունների, հատկապես արտադրողականության բարձրացմանը, կանաչ տնտեսու-թյան զարգացման, էներգախնայողական և շրջանաձև տնտեսության ձևավորմանը և զարգացմանը, լոգիստիկ գործընթացների արդյունավետ կազմակերպմանը և կառավարմանը միտված, ներմու-ծումը և գոյություն ունեցող ու ուսուցանվող մասնագիտությունների և որակավորումների վերանայումն ու արդիականացումը:

Ներկայումս ՄԿՈՒ հաստատություններում ընդունելության տեղերի բաշխումը չի համապատասխանում տարածաշրջանում տնտեսության, հատկապես մարզերի զարգացման ուղղություններին և աշխատաշուկայի ապագա մարտահրավերներին, չի արտացոլում համայնքների խոշորացման արդյունքում ձևավորվող նոր պահանջարկին, ինչի հետևանքով շրջանավարտների մի զգալի մասը կամ ընտրում է այլ մասնագիտություն (զբաղմունք) աշխատաշուկայում կամ դառնում է գործազուրկ:

Անհրաժեշտ է իրականացնել ՄԿՈՒ ուսումնական հաստատություններում ընդունելության տեղերի վերաբաշխում՝ հաշվի առնելով ՀՀ տնտեսության, ՀՀ մարզերի զարգացման ուղղությունները, առանձնահատկությունները, աշխատաշուկայի առկա պահանջարկը և զարգացման միտումները, շրջանավարտների մասնագիտական աշխատանքով ապահո-վածության վերաբերյալ արդյունքների վերլուծությունը, միջնաժամկետ և երկարաժամկետ հատվածներում անհրաժեշտ մասնագետների քանակը, տրամադրվող կրթական ծրագրերի բովանդակությունը և իրականացման գործիքակազմը:

<u>Միջին մասնագիտական կրթություն</u>

Հանրապետությունում գործում են միջին մասնագիտական 99 պետական և ոչ պետական ուսումնական հաստատություններում (ՄՄՈՒՀ): 2022/2023 ուսումնական տարում ընդունվել է 11044 (կանայք՝ 50.8%), սովորել՝ 33230 (կանայք՝ 50.9%), ավարտել՝ 7169 (կանայք՝ 53.2%) մարդ: Ուսումնառությունն իրականացվել է հիմնական և միջնակարգ կրթության հիմքի վրա: Ուսանողների համախառն ընդգրկվածության ցուցանիշը կազմել է 15.3% (կանանց՝ 16.7%, տղամարդկանց՝ 14.1%), սեռային հավասարության ցուցանիշը (տղամարդկանց համախառն ընդգրկվածության ցուցանիշի նկատմամբ կանանց համախառն ընդգրկվածության ցուցանիշի հարաբերակցության գործակիցը)՝ 1.19:

99 հաստատություններից 38 Երևանում են: Նախնական մասնագիտական (արհեստագոր-ծական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորողների կեսից ավելին՝ 55.1%-ը, ուսումը ստացել է Երևանում, թեև այստեղ է գտնվում այդ հաստատությունների 35.5%-ը: Այս ցուցանիշներն անհամադրելի են զբաղվածության ցուցանիշներին:

Հարկ է նշել, որ միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ուսանող-ների թվաքանակի շարժն ըստ մասնագիտությունների վերաբերյալ ներկայացված պաշտոնական թվերը չեն արտացոլում տնտեսության իրական հատվածում մասնագետ-ների պատրաստման թվաքանակը, մասնավորապես ներկայացված է <<Արդյունաբերու-թյուն և տեխնոլոգիա>>, բայց հստակեցված չէ, արդյունաբերության որ ճյուղի համար են մասնագետներ պատրաստվել: Նույն կարելի է ասել գյուղատնտեսության համար հստակ չի երևում ուղղվածությունը, օրինակ՝ գյուղմթերքների արտադրություն, անասնաբուժություն, անասնաբուծություն,պտուղ բանջարե-ղենի արտադրություն, մեղրի արտադրություն, մսամթերքի արտադրություն, և այլն: Հետևաբար հստակ ասել, թե տնտեսության որ ուղղության համար են մասնագետներ պատրաստում և ինչի կարիք կա դժվար է տասախանել, այս ցուցանիշներից ելնելով:

Անհամապատասխանություն կա ՄԿՈՒ հաստատության շրջանավարտների և աշխատա-շուկայում պահանջարկված մասնագիտությունների միջև, մասնավորապես <<Ծրագրա-վորում>> մասնագիտության պահանջարկը կազմում է 16,8% ավելացրած նաև <<ՏՏ աջակցություն և տեխնիկա>> 1,2% (գումարային 18 %) մինչդեռ <<Տեղեկատվություն և հաղորդակցման տեխնոլոգիաներ>> մասնագիտությամբ շրջանավարտների քանակը կազմում է ընդամենը 11,9 %:

6 հազար 64 տեղ է հատկացվել ԿԳՄՍ նախարարության ենթակայությամբ գործող միջին մասնագիտական ուսումնական հաստատություններին, իսկ նախնական մասնագիտա-կան (արհեստագործական) կրթական ծրագրով պահպանվել է նախորդ տարվա թիվը՝ 3 հազար 312:
ՀՀ Կառավարության որոշմամբ 2023-2024 ուսումնական տարում նախնական մասնագի-տական (արհեստագործական) կրթական ծրագրով անվճար ուսուցմամբ (նպաստի ձեւով ուսման վճարի լրիվ փոխհատուցմամբ) ընդունելության տեղերը հատկացվել են 55 ուսումնական հաստատության՝ 42 մասնագիտությամբ, իսկ միջին մասնագիտական կրթական ծրագրով՝ 76 ուսումնական հաստատության՝ 107 մասնագիտությամբ:
Սույն հետազոտության շրջանակներում իրականացվել է հարցումներ, հարցազրույցներ գործատուների, ՄԿՈՒ ուսումնական հաստատությունների և ոլորտի փորձառու մասնագետների շրջանում Հայաստանի գործատուների հանրապետական միության կողմից մշակված հարցաշարով, որը հնարավորություն կտա պատկերացում կազմել կրթություն-աշխատաշուկա փոխհարաբերություններում առկա խնդիրների վերաբերյալ և մշակել առաջարկությունների փաթեթ դրանց լուծման համար:
Ստորև ներկայացում ենք հարցումների պատասխանները:

1. Ծանոթ եք արդյոք որակավորումների ազգային շրջանակին, որը սահմանում է որակավորման տվյալ մակարդակին ներկայացվող կարողությունները և հմտությունները

Հարցումների մասնակիցների 40 տոկոսը նշել էր , որ ծանոթ չէ,
30 տոկոսը՝ ծանոթ է,
25 տոկոսը՝ ընդամենը տեղեկացված է,
5 տոկոսը՝ դրա անհրաժեշտությունը չկա:

2.Աշխատանքի ընդունելիս որքանով է Ձեզ համար կարևոր տվյալ թեկնածուի դիպլոմի առկայությունը՝

53 տոկոսը նշել էր որ կարևոր է,
21 տոկոսը՝ ցանկալի է,
5 տոկոսը՝ կարևոր չէ,
5 տոկոսը նշել է կարևոր են միայն մասնագիտական գիտելիքներն ու կարողությունները:

3.Տեղյակ եք արդյոք Հայաստանի Հանրապետությունում մասնագիտական կրթության ոլորտում իրականացվող ծրագրերին, առկա ռազմավարություններին, բարեփոխումներին այդ թվում ԵՄ- Հայաստան համապարփակ և ընդլայնված համաձայնագրի դրույթներին և կրթությանն վերաբերվող հոդվածներին

33 տոկոսը նշել էր որ ծանոթ է,
45 տոկոսը՝ ծանոթ չէ,
11 տոկոսը՝ դրա կարիքը չկա,
11 տոկոսը՝ դժվարանում եմ պատասխանել

4.Արդյո՞ք նախնական կամ միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների շրջանավարտների գործնական հմտությունները համապատասխանում են Ձեր կազմակերպության պահանջներին.

44 տոկոսը նշել էր որ չի համապատասխանում, 33 տոկոսը՝ մասամբ է համապատասխանում,17 տոկոսը՝ դժվարանում եմ պատասխանել և ընդամենը 6 տոկոսն է նշել համապատասխանում է:

5. Արդյո՞ք նախնական կամ միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների շրջանավարտներն ունեն համապատասխան տեսական գիտելիքներ.

75 տոկոսը նշել է որ մասամբ է համապատասխանում,

չի համապատասխանում՝ 5 տոկոսը,

5 տոկոսը դժվարանում եմ պատասխանել,

ընդամենը 15 տոկոսն է նշել էր որ լրիվ համապատասխանում է:

Այս հարցին ՄԿՈՒ հաստատություններից երկուսը նշել են լրիվ է համապատասխանում, մեկը նշել է մասմաբ է համապատասխանում:

6.Ի՞նչն եք, բավարար համարում մասնագիտական ուսումնական հաստատություններում իրականացվող ուսուցման գործում.

26 տոկոսը նշել էր ուսուցման կազմակերպման գործընթացները,

23 տոկոսը նշել է մեթոդաբանությունը,

19 տոկոսը՝ դասախոսների պատրաստվածությունը,

19 տոկոսը՝ շենքային և գույքային պայմանները,

13 տոկոսը՝ դժվարանում եմ պատասխանել:

Այս հարցին ՄԿՈՒ հաստատություններից նշել են դասախոսական կազմի պատրաստվածությունը, շենքային և գույքային պայմանները, ուսուցման կազմակերպման գործընթացները:

7.Մասնագիտական ուսուցման հատկապես ո՞ր կողմը բարելավման կարիք ունի.

35 տոկոսը նշել էր գործնական պարապմունքները,

27 տոկոսը նշել էր ուսումնալաբորատոր բազան

20 տոկոսը նշել էր տեսական ուսուցումը,

18 տոկոսը նշել է դասախոսական կազմը

Այս հարցին ՄԿՈՒ հաստատություններից հիմնականում նշել են ուսումնալաբորատոր բազան, գործնական պարապմունքները:

8. Արդյո՞ք անցել են որևէ ուսուցում Ձեր աշխատակիցները աշխատանքի վայրում՝ կապված իրենց ընթացիկ աշխատանքային պարտականությունների հետ.

53 տոկոսը նշել էր որ անցել են

26 տոկոսը նշել էր որ անցել են մասամբ

16 տոկոսը նշել է որանցել են մասամբ

5 տոկոսը դժվարացել է պատասխանել

9. Ո՞րոնք են Ձեր քանակական մասնագիտական պահանջարկը ս/թ և գալիք տարիների համար <u>Ձեր ընկերության</u> և *Ձեր տնտեսական ճյուղի համար*:

65 տոկոսը նշել է մինչև 10 աշխատատեղ

25 տոկոսը նշել է 10-20 աշխատատեղ

10տոկոսը՝ 20 և ավելի աշխատատեղ

10.Ձեր տնտեսական ճյուղը որպես գերակա ճյուղ (եթե գերակա է), աշխատաշուկայի տեսանկյունից ի՞նչպիսի զարգացումներ կունենա բարձրագույն և ՄԿՈՒ մասնագետների պահանջարկի նկատմամբ: Եթե ճյուղի մասին չեք կարող նշել, ապա նշեք Ձեր ընկերության օրինակով:

60 տոկոսը նշել է նորարարական տեխնոլոգիաների կիրառում

30 տոկոսը նշել է արտադրողականության բարձրացում

10 տոկոսը՝ կանաչ տեխնոլոգիաների կիրառում

11. Ձեր կարծիքով, ո՞րոնք են հիմնական անհամապատասխանությունները կրթական համակարգի և աշխատաշուկայի միջև: ՀՀ Պետական մարմինների կողմից Ի՞նչ օրենսդրական փաստաթղթերի և պետական միջոցառումների եք ծանոթ, որոնք օգնում են մեղմացնելու առկա անհամապատասխանությունը

55 տոկոսը նշել է ծանոթ չեմ օրենսդրական փաստաթղթերին

25 տոկոսը նշել է ուսումնալաբորատոր սարքավորումների ոչ համապատասխանությունը ժամանակակից աշխատաշուկայի պահանջներին

20 տոկոսը՝ օրենսդրական դաշտում կրթական համակարգի և գործատուների շահերի ներդաշնակեցման բացակայությունը

Այս հարցին ՄԿՈՒ հաստատությունները նշել են՝ **ՄԿՈՒ ոլորտի օրենքի նոր նախագծին, որը կմեղմի անհամապատասխանությունները:**

12. Ձեր կարծիքով ի՞նչ պատճառով են առաջանում այդ անհամապատասխանությունները

50 տոկոսը նշել է կրթական ոլորտի ոչ բավարար ֆինանսավորումը

40 տոկոսը նշել է կրթական հաստատությունների և գործատուների թույլ համագործակցությունը

10 տոկոսը՝ հանրակրթության ոլորտում առկա խնդիրները

Այս հարցին ՄԿՈՒ հաստատությունները նշել են՝ **Գործատուի և ուսումնական հաստատության միջև համագործակցության բացակայություն: Այսօր գործատուների մեծ մասը մոտիվացված չէ ՄԿՈՒ ոլորտի հետ ավելի արդյունավետ աշխատելու:**

13. Ձեր կարծիքով ի՞նչպիսի գործընթացներ պետք է իրականացվեն ՄԿՈՒ համակարգում, պատրաստվող մասնագետների հմտությունները և կարողությունները բարելավելու համար: Այդ նպատակով Ձեր կազմակերպությունն ունի կանոնավոր կապեր որևէ նախնական կամ միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների հետ

32 տոկոսը նշել է որ չունի

37 տոկոսը նշել էր որ ունի

26 տոկոսը՝ ունի մասնակի կապեր

5 տոկոսը նշել է նախատեսում է ապագայում ունենալ

14.Եթե ունի, ապա ինչ նպատակով

61 տոկոսը նշել է ուսանողների պրակտիկաների կազմակերպման նպատակով

11 տոկոս նշել է ուսանողների պետական քննությունների կամ դիպլոմային աշխատանքների պաշտպանություններին մասնակցելու նպատակով

11 տոկոս նշել է ուսումնական պլաններ և ծրագրեր մշակելու նպատակով

11 տոկոս նշել է այլ

6 տոկոսը նշել է կազմակերպության աշխատակիցների վերապատրաստումների նպատակով

15. Ձեր կարծիքով ո՞րոնք են այն հիմնական գործոնները, որոնց շնորհիվ հնարավոր է խթանել զբաղվածությունը, այդ թվում երիտասարդների, նվազեցնել աշխատանքից ազատման ռիսկերը

50 տոկոսը նշել է կրթություն-աշխատաշուկա կապերի ամրապնդում

30 տոկոսը նշել է մասագիտությունների քանակական և որակական համապատասխա-նությունը ներկայի և ապագայի տեսանկյունցի

10 տոկոսը՝ վերանայել կրթության դերը հանրային կյանքի կազմակերպման տիրույթում

10 բարձրացնել կրթության որակը

16. Ու՞մ եք դիմում աշխատողների պահանջարկի դեպքում

33 տոկոսը նշել է ,, ինքս եմ տալիս հայտարարություն ,,

21 տոկոսը նշել է դիմում եմ ուսումնական հաստատություններ, ուսուցման կենտրոններ

21 տոկոսը նշել է դիմում եմ ծանոթ բարեկամներիս

10 տոկոսը՝ դիմում եմ զբաղվածության կենտրոններ

15 տոկոսը՝ այլ

17. Գլոբալ առումով Ձեզ բավարարու՞մ է ներկայիս կրթության որակը, մասնագետների ապահովման տեսանկյունից

70 տոկոսը նշել է ոչ

20 տոկոսը նշել է մասնակի

10 տոկոսը նշել է այո

Այս հարցին ՄԿՈՒ հաստատությունները նշել են՝ **Մասամբ; գլոբալ առումով այո, կա վերանայման կարիք:**

Եզրակացություն, առաջարկներ նախնական մասնագիտական և միջին մասնագիտական կրթության համակարգի բարելավմանը համար

Կարևորելով նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության դերը սոցիալ-տնտեսական զարգացման, պահանջարկին համապատասխան աշխատաշուկայի համալրման գործում՝ անհրաժեշտ է առանձնացնել ոլորտի բարեփոխումների հետևյալ հիմնական ուղղվածությունները.

- աշխատաշուկայի պահանջարկի համալիր ուսումնսիրում, ապագա զարգացումների գնահատում, հաշվի առնելով ռիսկերը աշխատաշուկայում, տարածաշրջանում,

-աշխատաշուկայի ժամանակակից պահանջներին և ապագա զարգացումների միտումներին համապատասխան կրթական ծրագրերի վերանայում և արդիականացում, նոր մասնագիտությունների ցանկի մշակում և ներդրում,

-ճկուն հմտությունների զարգացում, պետական կրթական չափրոշիչների և մոդուլային ուսումնական ծրագրերի բովանդակային և կառուցվածքային շարունակական վերանայում և բարելավում, շարունակական կրթության համար ավելի բարենպաստ պայմանների ապահովման համատեքստում,

-ուսումնական հաստատությունների և դրանցում իրականացվող ծրագրերի տեղաբաշխ-ման վերանայում և օպտիմալացում, ընդունելության տեղերի բաշխման նոր մեթոդաբա-նության ներդրում՝ համապատասխանեցնելով Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման գերակա ուղղություններին, մարզերի զարգացման առանձնա-հատկություններին, ինչպես նաև աշխատաշուկայի պահանջարկին: Դեռևս 7 տարի առաջ ՀԳՀՄ-ն ներկայացրեց առջարկների փաթեթ ՀՀ ԿԵԳ նախարարությանը՝ ուսումնական հաստատությունների տեղերի բաշխման գործընթացում հաշվի առնել ՀԳՀՄ-ի առաջարկ-ները այն պայմանով, որ հատկացվող նպատակային տեղերի համար նախատեսված բյուջետային հատկացումների մինչև 40 տոկոսը պատրաստ են վճարել գործատուները, սակայն առ այսօր առաջարկը գործնական լուծում չի ստացել,

-Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման գերակա ուղղություն-ներին և սահմանամերձ մարզերի զարգացման ռազմավարություններին համապատաս-խան շարունակաբար ներդնել աշխատանքի վրա հիմնված և դուալ ուսուցումը՝ մասնավոր հատվածի և

գործարար համայնքի ակտիվ մասնակցությամբ, աշխատաշուկայի պահան-ջարկի վրա հիմնված վերջնարդյունքների ձեռքբերմամբ, որը կնպաստի մարզերի համալիր զարգացմանը և որակյալ աշխատուժի պատրաստմանը,

- հաստատությունների կառավարման գործող համակարգերի արդյունավետությունը բավականին ցածր է, կառավարման համակարգերը չեն կարողանում հստակ իրակա-նացնել կրթության որակի ապահովմանն ուղղված գործընթացները, որը պահանջնում է նոր մոդելների մշակում և ներդրում՝ հիմնված պետական-մասնավոր համագործակցու-թյան վրա,

-ՄԿՈՒ ոլորտում երիտասարդ և արհեստավարժ մանկավարժների մոտիվացիան ցածր է, որը պահանջնում է մոտիվացման նոր ձևաչափերի ներդրում, մասնագիտական կարո-ղությունների և գիտելիքների զարգացման և ատեստավորման համակարգերի ներդրում՝ կապակցելով վարձատրության մեխանիզմների, ինչպես նաև հասարակությունում նրանց սոցիալական դերի բարձրացման հետ,

- նախնական արհեստագործական և միջին մասնագիտական կրթության գրավչության, մատչելիության բարձրացման, ներառականության ապահովման նպատակով մասնագի-տական կողմնորոշման նոր մոդելի նրեդրում,

-կրթության գրավչության, որակի, ուսումնառության վերջնարդյունքների ապահովման համար ուսումնական հաստատությունների շենքային պայմանների բարելավում, ուսում-նաարտադրական բազայով (լաբորատորիաներով) ապահովում, հայերեն լեզվով մասնագիտական կրթաբլոկի ուսումնամեթոդական ժամանակակից գրականության ապահովում,

-ՄԿՈՒ հաստատություններում ուսումնալաբորատոր սարքավորումների գույքագրում, օգտագործման արդյունավետության գնահատում, ըստ մարզերի և մասնագիտություն-ների միասնական լաբորատոր տարածքի ձևավորման հնարավորությունների և իրակա-նացման գնահատում,

-սոցիալական երկխոսության նոր ձևաչափի մշակում և ներդրում, երկխոսության արդյունավետության բարձրացում,

- արագ և ճկուն որակավորում ապահովող մեխանիզմների ներդրում, այդ թվում՝ոչ ֆորմալ

կրթության արդյունքում նոր որակավորումների ճանաչման միջոցով՝ պետություն-գործա-տուների կառույցներ համագործակցության հիմքով:

<u>Բարձրագույն կրթություն:</u>

Բարձրագույն կրթության ոլորտի զարգացումը նույնպես սերտորեն կապած է պետության զարգացման ռազմավարությանը և գերակայություններին:

Նոր իրողությունների պայմաններում բարձրագույն կրթության որլորտում առանցքային են լինելու ներառական, ուսանողակենտրոն նորարարական կրթական միջավայրի ստեղծումը, աշխատաշուկայի պահանջարկին համապատասխան նոր մասնագիտություն-ների և կրթական ծրագրերի մշակումն ու ներդնումը, բարձրագույն կրթության արդյունա-վետության բարձրացումը, էլեկտրոնային կառավարման համակարգի և էլեկտրոնային ուսուցման գործիքների արդյունավետ կիրառումը և շարունակական զարգացումը, կրթու-թյան բովանդակության շարունակական արդիականացումը, դասավանդողների կարողու-թյունների և անհրաժեշտ ենթակառուցվածքների զարգացումը և խոշորացումը՝ ուսումնա-

գիտական-արտադրական կենտրոնների վերծման նպատակով, ինչպես նաև «կրթություն-գիտություն-աշխատաշուկա» կապի ամրապնդումը:

2022/2023 ուսումնական տարում Հանրապետության 54 բարձրագույն պետական և ոչ պետական ուսումնական հաստատություններ (ԲՈՒՀ) և 13 մասնաճյուղեր բարձրագույն կրթության առաջին աստիճանում իրականացրել են մասնագիտական կրթություն բակալավրի ծրագրերով: 54 բուհերից 43 Երևանում են:

Բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողների թվաքանակի շարժն ըստ մասնագիտությունների վերաբերյալ ներկայացված պաշտոնական թվերը նույնպես չեն արտացոլում տնտեսության իրական հատվածում մասնագետների պատրաստման թվաքանակը: 2022/2023 ուս. տարում 11500 շրջանավարտներից ընդամենը 538 են Ճարտա-րագիտության, 199 Արդյունաբերություն և տեխնոլոգիաներ, 200 Ճարտարապետություն և շինարարությունը մասնագիտությամբ: Գյուղատնտեսական գիտություններ – 57,

Անտառային տնտեսություն-15, Անասնաբուժություն-68:

Այս համատեքստում բնականաբար խոսել աշխատաշուկայի պահանջների բավարարման մասին այս ոլորտներում իրական չէ:

Եզրակացություն, առաջարկներ բարձրագույն կրթության համակարգի բարելավման համար

Բարձրագույն կրթության ոլորտի բարեփոխումների շարունակական և արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ քայլերը, որոնք պետք է միտված լինեն՝

-արդյունավետ կառավարման,բաց,թափանցիկ և հավասարակշռված հաշվետվողականու-թյան ինստիտուցիոնալ մեխանիզմների ներդրմանը,

-բարձրագույն կրթության առկա երկու մակարդակների (բակալավրիատ և մագիստրատուրա) հստակ տարանջատմանն ու որոշակի լրացմանը, որակի շարունակական բարելավմանը, բարձրագույն կրթության մեջ հետազոտական բաղադրիչի և դրա հետագա ապրանքայնացման շարունակական մեծացմանը,

- կրթական ծրագրերի բովանդակության և կառուցվածքի վերանայմանը՝ ուղղելով դեպի աշխատաշուկայի պահանջարկին միտված ուսումնառության վերջնարդյունքներ՝ որակա-վորումների ազգային շրջանակի պահանջներին համապատասխան,

-բարձրագույն կրթության միջազգայնացմանը, շարժունության հնարավորություն-ների ընդլայնմանը,

-բարձրագույն կրթության թիրախային ֆինանսավորման համակարգի ներդրմանն ու աստիճանա-կան ավելացմանը, ուսումնական հաստատություններին տրամադրվող ֆինանսական միջոցների սկզբունքների վերանայմանը՝ ֆինանսական աջակցության հասցեականությունը, նպատակայնու-թյունը, ուսումնական հաստատության գործունեության արդյունավետության առանցքային ցուցանիշների սահմանմամբ և արդյունքից կախված ֆինանսավորման մեխանիզմների ներդրմամբ,

-բարձրագույն կրթության ներառականության ընդլայնմանը խթանելուն,

-ուսումնառության և դասավանդման նոր մեթոդաբանության և գործիքակազմի մշակմանը և ներդրմանը,

-բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունելության սկզբունքների և

մեխանիզմների վերանայմանը, մասնավորապես բիզնես համայնքի կողմից պատվի-րակված տեղերի հատկացմամբ և ուսումնական ծախսերի փոխհատուցմամբ,
-աշխատաշուկայի նոր պահանջներին համապատասխան և գլոբալ զարգացումների համատեքս-տում նոր մասնագիտությունների, կրթական ծրագրերի և առանձին մոդուլների ներդրում,
-դպրոց-բուհ-մասնավոր հատված համակարգի արդյունավետ համագործակցության ապահով-մանը, մասնագիտական կողմնորոշման, նոր պահանջարկված մասնագիտությունների վերաբերյալ իրազեկվածության ապահովման նոր մոդելների մշակմանն ու ներդրմանը ծնողների, ուսուցիչների, աշակերտների և համայնքի շրջանում,
-բարձրագույն կրթության ոլորտում սոցիալական նոր գրավիչ միջավայր ապահովելուն անհրաժեշտ ենթակառուցվածքների ներդրմանը,
-ուսումնական հաստատություն-գործատու համագործակցության նոր ձևաչափերի ներ-դրում, որը հնարավորություն կտա օգտագործել գործատուների արտադրատեխնիկական և տեխնոլոգիական հնարավորությունները, ուսանողների գործնական կարողությունների և հմտությունների ձեռքբերման համար;
-կրթության կառավարման ու կազմակերպման գործընթացներում սոցիալական գործընկե-րության և պատասխանատվություն համագործակցային նոր մոդելի ներդրում:

Գրականություն

1.https://www.mfa.am/filemanager/eu/CEPA_ARM_1.pdf
2.https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=153164
3. Եվրոպական կրթական հիմնադրամ. Երկրի տեղեկագիր 2020 Հայաստան. Կրթության, ուսուցման և զբաղվածության զարգացումներ
4.https://www.etf.europa.eu/sites/default/files/document/Country%20Fiche%202020%20Armenia%20-%20Education_%20Training%20and%20Employment%20Developments.pdf
5.ԱՇԽԱՏԱՆՔԻ ՇՈՒԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ - LABOUR MARKET IN ARMENIA, 2022
6. Bussolo et al., 2019
7. staff.am, ժամանակահատվածը՝ 2021-2022թ.թ.
8. https://www.armstat.am/file/article/lab_market_2022_11.pdf:
9. eec.eaeunion.org
10. The Global Gender Gap Report 2021 https://www3.weforum.org/docs/WEF_GGGR_2021.pdf
11. The Global Human Capital Index, https://weforum.ent.box.com/s/dari4dktg4jt2g9xo2o5pksjpatvawdb
12.https://documents1.worldbank.org/curated/ar/325281572596343195/pdf/Work-for-a-Better-Future-in-Armenia-An-Analysis-of-Jobs-Dynamics.pdf
13. "Նախնական մասնագիտական (արհեստագործական) եվ միջին մասնագիտական կրթության մասին" ՀՀ օրենքի՝ Արհեստագործականկրթությունը և ուսուցումը իրականացվում է արհեստագործական ուսումնարաններում, քոլեջներում, այլ մասնագիտական ուսումնականհաստատություններում, կազմակերպությունների ուսումնական կենտրոններում, քրեակատարողական հիմնարկներում, համապատասխան լիցենզիա ունեցող և անհատական մասնագիտական ուսուցում իրականացնող վարպետների մոտ:
14. ՀՀ ԿԳ նախարարի 2018թ. մարտի 15-ի N 233-Ա/2 հրամանի հավելված
15. https://www.e-draft.am/en/projects/4842/justification

16· Հայաստանի Հանրապետության կրթության մինչեւ 2030 թվականը զարգացման պետական ծրագիր, https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=175541
17.ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ, 2019, «ՀՀ աշխատաշուկայի առաջարկի և պահանջարկի վերլուծություն և գնահատում ծրագրի թեմայով աշխատանքների կատարման հաշվետվություն»
18. ILO, 2014, Labor market transition for young women and men in Armenia.